



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
(Հայարտոնագիր)

ԱՊՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

No 2 (4)

Патентное управление Республики Армения
(Армпатент)

ПРОМЫШЛЕННАЯ
СОБСТВЕННОСТЬ

Официальный бюллетень

Հրատարակվում է 1995 թվականից

Սույն տեղեկագրում զետեղված տեղեկությունները համարվում են
հրապարակված 1997 թվականի դեկտեմբերի 9-ից

Երեւան 1997

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՓԱՏՍԹՈՂԹԵՐ	5, 161
Հայաստանի Հանրապետության օրենքը ֆիրմային անվանումների մասին	7
Արտոնագրերի զիջման մասին պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման կարգը	13, 163
Ապրանքային նշանների զիջման մասին պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման կարգը	18, 165
ԳՅՈՒՏԵՐ	23, 167
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	25, 169
Տեղեկություններ գյուտերի նախկին ԽՍՀՄ պաշտպանական փաստաթղթերի հիման վրա տրված արտոնագրերի մասին	40, 182
ՕԳՏԱԿԱՐ ՍԱՐՔԵՐ	41, 183
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	43, 185
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ	45, 187
Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին	47, 189
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	49
Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին	51
ՑՈՒՑԻՉՆԵՐ	153
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	157
ԵՐԿՏԱՌ ԿՈՂԵՐԸ	191

Հրատարակվում է Հայարտոնագրի կողմից

Թողարկման պատասխանատու Անդրանիկ ԽԱԶԻԿՅԱՆ
 Գեղարվեստական եւ տեխնիկական խմբագիր Մանվել ԲԱԲԱՅԱՆ
 Խմբագիրներ Գոհար ԱԴԱՄՅԱՆ
 Սարատ ՃՈՒՂՈՒԻՅԱՆ
 Գեղարվեստական մշակում եւ կոմպյուտերային էջատում Ինեսսա ԱՆԱՆՅԱՆ
 Օպերատորներ Նարինե ԼՈՒԼԱՆՋՅԱՆ
 Արմինե ՓԵԹԱԿՉՅԱՆ
 375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
 Հեռ. 563 258 ընդհանուր բաժին
 Հեռ. 580 631 տեղեկատվության եւ տեղեկագիտության բաժին
 E-mail: patent@arminco.com

© Հայարտոնագիր

СОДЕРЖАНИЕ

CONTENTS

ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ И НОРМАТИВНЫЕ ДОКУМЕНТЫ	5, 161	LEGISLATIVE AND NORMATIVE DOCUMENTS
Закон Республики Армения о фирменных наименованиях	7	Firm Name Law of the Republic of Armenia
Порядок регистрации договоров об уступке патентов и лицензионных договоров	13, 163	Regulation on registration of patent assignment and license agreements
Порядок регистрации договоров об уступке товарных знаков и лицензионных договоров	18, 165	Regulation on registration of trade mark assignment and license agreements
ИЗОБРЕТЕНИЯ	23, 167	INVENTIONS
Сведения о выданных патентах	25, 169	Informations on granted patents
Сведения о патентах, выданных на основании охранных документов бывшего СССР	40, 182	Informations on patents granted on the basis of protective documents for inventions of the former USSR
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ	41, 183	UTILITY MODELS
Сведения о выданных патентах	43, 185	Informations on granted patents
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ	45, 187	INDUSTRIAL DESIGNS
Сведения о выданных патентах	47, 189	Informations on granted patents
ТОВАРНЫЕ ЗНАКИ	49	TRADE MARKS
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	51	Informations on registered trade marks and service marks
УКАЗАТЕЛИ	153	INDEXES
СООБЩЕНИЯ	157	REPORTS
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ	191	TWO-LETTER CODES

Издается Армпатентом с 1995 г.

Ответственный за выпуск Андраник ХАЧИКЯН
 Художественный и технический редактор Манвел БАБАЯН
 Редакторы Гоар АДАМЯН
 Марат ЧУГУРЯН
 Художественное оформление и компьютерная верстка Инесса АНАНЯН
 Операторы Нарине ЛУЛАНДЖЯН
 Армине ПЕТАКЧЯН

375010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3

Тел. 563 258 общий отдел

Тел. 580 631 отдел информации и информатики

E-mail: patent@arminco.com

© Армпатент

**ՕՐԵՆՍԳՐԱԿԱՆ ԵՎ
ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ
ՓԱՍՏԱԹՂԹԵՐ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**Գլուխ I
Ընդհանուր դրույթներ**

Հոդված 1. Օրենքով կարգավորվող հարաբերությունները

Սույն օրենքով կարգավորվում են իրավաբանական անձանց եւ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների անվանումների (այսուհետ՝ ֆիրմային անվանումներ) գրանցման, իրավական պաշտպանության եւ օգտագործման հետ կապված հարաբերությունները:

Սույն օրենքը տարածվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված կազմակերպական-իրավական բոլոր տեսակի իրավաբանական անձանց եւ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների վրա:

Գլուխ II

Ֆիրմային անվանումներ

Հոդված 2. Ֆիրմային անվանումը

Իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության ֆիրմային անվանումն այն անվանումն է, որի ներքո նա իրականացնում է իր գործունեությունը, եւ որը թույլ է տալիս նրան զանազանվել այլ իրավաբանական անձանցից եւ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններից:

Իրավաբանական անձանց կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության ֆիրմային անվանումը պետք է բովանդակի նրա կազմակերպական-իրավական տեսակը բնորոշող բառեր եւ տարբերակող նշանակության գոնե մեկ հատուկ (անձնանուն, տեղանքի կամ խորհրդանշական անվանում) կամ հասարակ անուն:

Ֆիրմային անվանումը կարող է բովանդակել նաեւ իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության գտնվելու վայրի անվանումը, նրա գործունեությունը բնորոշող բառեր, ինչպես նաեւ այլ տվյալներ, որոնք նրա սեփականատերը (հիմնադիրը) համարում է անհրաժեշտ:

Անհատական (ընտանեկան) ձեռնարկության ֆիրմային անվանումը պետք է բովանդակի «անհատական ձեռնարկություն» («ընտանեկան ձեռնարկություն») բառերը եւ նրա սեփականատերից (հիմնադիրներից) յուրաքանչյուրի անունը եւ (կամ) ազգանունը, կամ սեփականատերից (հիմնադիրներից) առնվազն մեկի անունը եւ (կամ) ազգանունը՝ ավելացնելով նրանց փոխհարաբերությունները բնորոշող բառեր:

Տնտեսական ընկերակցության ֆիրմային անվանումը պետք է բովանդակի «լիակատար (կամ վստահության վրա հիմնված) ընկերակցություն» բառերը, ընկերակցության բոլոր մասնակիցների (լիակատար ընկերների) անունները եւ (կամ) անվանումները կամ ընկերակցության մասնակիցներից (լիակատար ընկերներից) առնվազն մեկի անունը (անվանումը)՝ ավելացրած «եւ գործընկերներ» կամ «եւ ընկերներ» բառերը:

Հոդված 3. Ֆիրմային անվանումներում թույլտվություն պահանջող անունների եւ անվանումների օգտագործումը

Ֆիրմային անվանման մեջ պատմական կամ այլ հանրահայտ անձի լրիվ կամ կրճատ անունը կարող է օգտագործվել միայն այդ անձի կամ նրա ժառանգների համաձայնությամբ:

Եթե պատմական կամ այլ հանրահայտ անձը կամ նրա անվան օգտագործման համաձայնություն տվող ժառանգը գտնում է, որ իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության գործունեությունը ստվերում է այդ անձի հեղինակությունը (վարկը), ապա նա կարող է դիմել դատարան այդ անունը ֆիրմային անվանման մեջ օգտագործելու իրավունքից իրավաբանական անձին կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությանը զրկելու եւ (կամ) պատճառած վնասները փոխհատուցելու հայցով:

«Հայ», «Հայաստան», «հայկական», «համրապետություն», «հանրապետական» բառերը եւ դրանց թարգմանությունները, Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների անվանումները, ինչպես նաեւ պատմական կամ այլ հանրահայտ անձի լրիվ կամ կրճատ անունը՝ տվյալ անձի մահվան եւ ժառանգներ չունենալու դեպքում, ֆիրմային անվանումների մեջ կարող են օգտագործվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Գլուխ III

Ֆիրմային անվանման գրանցումը եւ հաշվառումը

Հոդված 4. Ֆիրմային անվանման գրանցումը

Մինչեւ Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունների պետական ռեգիստրում (այսուհետ՝ պետական ռեգիստր) իրավաբանական անձանց կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության պետական գրանցումը, նրա ֆիրմային անվանումը պետք է գրանցվի արդյունաբերական սեփականության հարցերով պետական կառավարման լիազորված մարմնի (այսուհետ՝ պետական լիազորված մարմին) կողմից՝ իրավաբանական անձանց կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության հիմնադրի (հիմնադիրների) (այսուհետ՝ հայտատու) ներկայացրած հայտի հիման վրա:

Հայտը կարող է ներկայացվել նաեւ հայտատուի կողմից լիազորված անձի միջոցով:

Հայտը պետք է պարունակի՝

ա) դիմում ֆիրմային անվանման գրանցման մասին, որի մեջ նշվում են գրանցման ներկայացված ֆիրմային անվանումը, դրա հապավումը կամ կրճատ ձևը, եթե այդպիսիք կան, իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող հայտատուի հասցեն, գործունեության նպատակը եւ բնագավառը.

բ) գրանցման ներկայացված ֆիրմային անվանման մեկնաբանությունը (բացատրությունը), եթե այն հայերեն հասկանալի չէ:

Հայտին կցվում են՝

ա) համաձայնությունը (թույլտվությունը)՝ սույն օրենքի 3 հոդվածով նախատեսված դեպքերում.

բ) լիազորագիրը, եթե հայտը ներկայացվում է հայտատուի կողմից լիազորված անձի միջոցով.

գ) սահմանված չափով տուրքի վճարման անդորրագիրը:

Հայտը ներկայացվում է հայերեն:

Դիմումի ձեւը եւ լրացման կարգը սահմանում է պետական լիազորված մարմինը:

Հոդված 5. Հայտի քննարկումը

Պետական լիազորված մարմինը հայտի ստացման օրվանից 15-օրյա ժամկետում անցկացնում է փորձաքննություն եւ որոշում է ֆիրմային անվանման համապատասխանությունը սույն օրենքի պահանջներին:

Եթե փորձաքննության ընթացքում պարզվում է, որ ներկայացված ֆիրմային անվանումը չի համապատասխանում սույն օրենքի պահանջներին, ապա որոշում է կայացվում ֆիրմային անվանման

ման գրանցումը մերժելու վերաբերյալ, ինչի մասին, մերժման հիմնավորմամբ, եռօրյա ժամկետում ծանուցվում է հայտատուն:

Փորձաքննության որոշմանը չհամաձայնելու դեպքում, այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում, հայտատուն իրավունք ունի գանգատ ներկայացնել պետական լիազորված մարմնի գանգատարկման խորհուրդ:

Գանգատը քննարկվում է պետական լիազորված մարմնի կողմից հաստատված կարգով:

Գանգատարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում, այն ստանալու օրվանից երկամսյա ժամկետում, հայտատուն իրավունք ունի դիմել դատարան:

Եթե ֆիրմային անվանումը համապատասխանում է սույն օրենքի պահանջներին, պետական լիազորված մարմինը որոշում է կայացնում այն գրանցելու մասին եւ եռօրյա ժամկետում ծանուցում է հայտատուին:

Ֆիրմային անվանումը գրանցելու մասին որոշումն ընդունելուց հետո, պետական լիազորված մարմինը ֆիրմային անվանումը գրանցում է ֆիրմային անվանումների գրանցման Հայաստանի Հանրապետության պետական մատյանում (այսուհետ՝ պետական գրանցամատյան):

Ֆիրմային անվանման գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը (այսուհետ՝ թվական) սահմանվում է հայտը պետական լիազորված մարմին ներկայացնելու թվականով:

Ֆիրմային անվանումը գրանցվում է հայերեն:

Պետական գրանցամատյանում գրանցվում է՝ ֆիրմային անվանումը, գրանցման համարը եւ թվականը, հայտի համարը, հայտատուի հասցեն, գործունեության նպատակը եւ ոլորտը:

Մինչեւ պետական ռեգիստրում իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության պետական գրանցումը, բայց ոչ ավելի, քան 6 ամիս, պետական գրանցամատյանում գրանցված ֆիրմային անվանումը ստանում է ժամանակավոր պաշտպանություն:

Հոդված 6. Ֆիրմային անվանման գրանցումը մերժելու հիմքերը

Որպես ֆիրմային անվանում գրանցման ենթակա չեն այն անվանումները, որոնք՝

- ա) համընկնում են Հայաստանի Հանրապետությունում ավելի վաղ գրանցված իրավաբանական անձանց կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների ֆիրմային անվանումներին, ինչպես նաեւ ավելի վաղ գրանցման գործողություն ունեցող ապրանքային կամ սպասարկման նշաններին, ապրանքների ծագման տեղանուններին կամ շփոթելու աստիճան մնան են դրանց եւ վերաբերում են գործունեության նույն ոլորտին.
- բ) հակասում են հասարակական շահերին,

մարդասիրության եւ բարոյականության սկզբունքներին.

գ) բնորոշում են ապրանքների եւ ծառայությունների որակը, հատկությունները, քանակը, գինը, դրանց արտադրության եղանակը եւ ժամանակը.

դ) բովանդակում են պատմական կամ որեւէ հանրահայտ անձի լրիվ կամ կրճատ անունը եւ ներկայացվել են առանց այդ անվան օգտագործման համապատասխան թույլտվության.

ե) հանրնկնում կամ նման են պետությունների, միջազգային եւ միջազգային կառավարական եւ ոչ կառավարական կազմակերպությունների անվանումներին.

զ) ֆիրմային անվանմամբ, ապրանքային կամ սպասարկման նշանով Հայաստանի Հանրապետությունում ճանաչված եւ հասարակությանը հայտնի օտարերկրյա իրավաբանական անձանց անվանմանը հանրնկնելու կամ նմանության պատճառով մոլորության մեջ են գցում հասարակությանը:

Հոդված 7. Ֆիրմային անվանման հաշվառումը

Ֆիրմային անվանման հաշվառումն իրականացնում է պետական լիազորված մարմինը՝ պետական ռեգիստրի տրամադրած տեղեկությունների հիման վրա:

Պետական ռեգիստրը յուրաքանչյուր ամիս տեղեկություններ է տրամադրում պետական լիազորված մարմնին նախորդ ամսում իրավաբանական անձանց կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների սկզբնական եւ ընթացիկ պետական գրանցման, ինչպես նաեւ նրանց լուծարման (գործունեության դադարեցման) վերաբերյալ:

Տրամադրվող տեղեկությունները պետք է պարունակեն իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության ֆիրմային անվանումը, պետական գրանցման համարը եւ թվականը, հասցեն, գործունեության ոլորտը, իսկ լուծարման (գործունեության դադարեցման) դեպքում՝ դրա պետական գրանցման թվականը:

Ստացված տեղեկությունների հիման վրա պետական լիազորված մարմինը՝

ա) որոշում է կայացնում ժամանակավոր պաշտպանություն ստացած ֆիրմային անվանման վկայական տալու կամ դրա գրանցումը չեղյալ ճանաչելու մասին.

բ) համապատասխան գրառումներ է կատարում պետական գրանցամատյանում:

Հոդված 8. Ֆիրմային անվանման գրանցման վկայականը

Ֆիրմային անվանման վկայական տալու մասին որոշում կայացնելուց հետո պետական լիազորված մարմինը մեկ ամսվա ընթացքում հայտա-

տուին հանձնում է ֆիրմային անվանման գրանցման վկայական:

Ֆիրմային անվանման գրանցման վկայականը հաստատում է ֆիրմային անվանման պետական գրանցման փաստը, ինչպես նաեւ իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության՝ դրա օգտագործման բացառիկ իրավունքը:

Ֆիրմային անվանման գրանցման վկայականի ձեւը եւ դրանում նշվող տեղեկությունների ցանկը սահմանում է պետական լիազորված մարմինը:

Ֆիրմային անվանման գրանցումը գործում է անժամկետ:

Հոդված 9. Ֆիրմային անվանումների գրանցման մասին տեղեկությունների հրապարակումը

Ֆիրմային անվանումների գրանցման, ինչպես նաեւ պետական գրանցամատյանում սույն օրենքին համապատասխան կատարված բոլոր փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունները հրապարակվում են պետական լիազորված մարմնի պաշտոնական տեղեկագրում:

Ֆիրմային անվանման պետական գրանցման մասին հրապարակվող տեղեկությունների լրիվ ցանկը սահմանում է պետական լիազորված մարմինը :

Գլուխ IV

Ֆիրմային անվանման օգտագործումը

Հոդված 10. Ֆիրմային անվանման օգտագործումը

Ֆիրմային անվանման օգտագործում է համարվում այդ անվանումով գործարքներ կատարելը, արտադրանքը տնտեսական շրջանառության մեջ մտցնելը, ապրանքներ եւ ծառայություններ գովազդելը, ֆինանսական գործառնություններ կատարելը, դատարանում կամ պետական արբիտրաժում հայց ներկայացնելը, ինչպես նաեւ ցուցանակներում, կնիքներում, դրոշմակնիքներում, ձեւվաթղթերում, ազդագրերում եւ այլ փաստաթղթերում այն կիրառելը:

Իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության առանձնացված ստորաբաժանումներն օգտագործում են իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության ֆիրմային անվանումը՝ ավելացնելով ստորաբաժանման գործունեության բնույթը բնորոշող բառեր կամ գտնվելու վայրի անվանումը:

Ֆիրմային անվանումն օգտագործվում է միայն այնպես, ինչպես այն գրանցված է պետական գրանցամատյանում:

Ֆիրմային անվանման հետ կարող են օգտագործվել նաև դրա օտարալեզու թարգմանությունները: Այդ դեպքում ֆիրմային անվանման մեջ պարունակվող տարբերակող նշանակության անունը չի թարգմանվում:

Հոդված 11. Ֆիրմային անվանման օգտագործման բացառիկ իրավունքը

Ֆիրմային անվանման օգտագործման բացառիկ իրավունքն ուժի մեջ է մտնում պետական ռեգիստրի կողմից իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության պետական գրանցման օրվանից եւ գործում է Հայաստանի Հանրապետությունում նրանց գործունեության ողջ ընթացքում, եթե ֆիրմային անվանումը չի հակասում սույն օրենքով սահմանված ֆիրմային անվանումների գրանցման պայմաններին:

Իրավաբանական անձը կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունը բացառիկ իրավունք ունի օգտագործել իր ֆիրմային անվանումը Հայաստանի Հանրապետությունում: Այլ իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների եւ ֆիզիկական անձանց կողմից այն ապօրինի օգտագործելու, այդ թվում՝ տվյալ ֆիրմային անվանմամբ նրանց կողմից իրավունքներ եւ պարտականություններ ձեռք բերելու դեպքում, իրավաբանական անձը կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունն իր իրավունքները կարող է պաշտպանել դատարանում կամ պետական արբիտրաժում:

Ֆիրմային անվանման օգտագործման բացառիկ իրավունքի խախտում է համարվում պաշտպանվող ֆիրմային անվանմանը նույնական կամ շփոթելու աստիճան նման անվանման օգտագործումն այլ իրավաբանական անձանց, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների եւ ֆիզիկական անձանց կողմից՝ գործունեության նույն ոլորտում:

Ֆիրմային անվանման օգտագործման բացառիկ իրավունքը կարող է փոխանցվել միայն տվյալ իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության հետ մեկտեղ:

Հոդված 12. Ֆիրմային անվանման գրանցման գործողության դադարեցումը

Ֆիրմային անվանման գրանցման գործողությունը դադարեցվում է, եւ իրավաբանական անձը կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունը զրկվում է Ֆիրմային անվանման օգտագործման բացառիկ իրավունքից, եթե՝

ա) օրենքով սահմանված դեպքերում դատարանի որոշմամբ նրան արգելվել է օգտագործել տվյալ ֆիրմային անվանումը:

բ) օրենքով սահմանված դեպքերում դատարանն անվավեր է ճանաչել ֆիրմային անվանման գրանցումը:

գ) իրավաբանական անձը կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունը իրաժարվել է ֆիրմային անվանման օգտագործման բացառիկ իրավունքից:

դ) իրավաբանական անձը կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունը լուծարվել է:

Հայաստանի Հանրապետության դատարանները ծանուցում են պետական լիազորված մարմնին ֆիրմային անվանումների վերաբերյալ որոշումների մասին:

Պետական լիազորված մարմինը ֆիրմային անվանումների վերաբերյալ դատարանների որոշումների հիման վրա համապատասխան փոփոխություններ է կատարում պետական գրանցամատյանում:

Ֆիրմային անվանման օգտագործման բացառիկ իրավունքից զրկվելու դեպքում այն կարող է տրվել այլ իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության ոչ շուտ, քան երեք տարի հետո:

Գլուխ V

Եզրափակիչ դրույթներ

Հոդված 13. Տուրքեր

Ֆիրմային անվանման գրանցման եւ իրավական պաշտպանության հետ կապված գործողությունների համար գանձվում են տուրքեր, որոնց տեսակները, չափերը եւ վճարման կարգը սահմանվում են օրենքով:

Հոդված 14. Ֆիրմային անվանումների հետ կապված վեճերի լուծումը

Ֆիրմային անվանումների գրանցման եւ օգտագործման հետ կապված վեճերը լուծվում են դատական կարգով:

Հոդված 15. Պատասխանատվությունը ֆիրմային անվանման օգտագործման բացառիկ իրավունքը խախտելու համար

Ֆիրմային անվանման ապօրինի օգտագործման հետեւանքով այդ անվանմամբ իրավաբանական անձին կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությանը պատճառված վնասները պետք է փոխհատուցվեն խախտողի կողմից: Վնաս կրած իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկության հեղինակությունը (վարկը) վերականգնելու նպատակով պետական լիազորված մարմինը տեղեկություն է հրապարակում դատական մարմնի համապատասխան որոշման մասին:

Ֆիրմային անվանման օգտագործման բացառիկ իրավունքը խախտելու դեպքում, խախտողի կողմից պատրաստված ֆիրմային անվանմամբ ցուցանակները, կնիքները, դրոշմակնիքները, ձեւաթղթերը, ազդագրերը եւ այլ տպագրական հրատարակությունները ենթակա են ոչնչացման:

Հոդված 16. Միջազգային պայմանագրերը

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

Հոդված 17. Հայաստանի Հանրապետության մի շարք օրենքներում փոփոխություններ կատարելու մասին

1. «Ձեռնարկությունների եւ ձեռնարկատիրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42 հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 42. Ձեռնարկության ֆիրմային անվանումը

Ձեռնարկությունն ունի ֆիրմային անվանում, որի գրանցումը, օգտագործումը եւ իրավական պաշտպանությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով»:

2. «Անհատական (ընտանեկան) ձեռնարկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7 հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 7. Անհատական (ընտանեկան) ձեռնարկության ֆիրմային անվանումը

Անհատական (ընտանեկան) ձեռնարկության ֆիրմային անվանումն այն անվանումն է, որի ներքո վերջինս իրականացնում է իր գործունեությունը, եւ որը թույլ է տալիս նրան զանազանվել այլ իրավաբանական անձանցից կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններից:

Անհատական (ընտանեկան) ձեռնարկության ֆիրմային անվանումը պետք է բովանդակի «անհատական (ընտանեկան) ձեռնարկություն» բառերը եւ նրա սեփականատերերից (հիմնադիրներից) յուրաքանչյուրի անունը եւ (կամ) ազգանունը, կամ սեփականատերերից (հիմնադիրներից) առնվազն մեկի անունը եւ (կամ) ազգանունը՝ ավելացնելով նրանց փոխհարաբերությունները բնորոշող բառեր:

Անհատական (ընտանեկան) ձեռնարկության ֆիրմային անվանումը կարող է բովանդակել նաեւ անհատական (ընտանեկան) ձեռնարկության գործունեությունը բնորոշող բառեր, նրա գտնվելու վայրի անվանումը, ինչպես նաեւ այլ տվյալներ, որոնք նրա սեփականատերը (հիմնադիրը) համարում է անհրաժեշտ:

Անհատական (ընտանեկան) ձեռնարկու-

թյան ֆիրմային անվանման գրանցումը եւ իրավական պաշտպանությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով»:

3. «Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7 հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 7. Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպության ֆիրմային անվանումը

Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպության ֆիրմային անվանումն այն անվանումն է, որի ներքո վերջինս իրականացնում է իր գործունեությունը, եւ որը թույլ է տալիս նրան զանազանվել այլ իրավաբանական անձանցից կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններից:

Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպության ֆիրմային անվանումը պետք է բովանդակի նրա կազմակերպական-իրավական տեսակը բնորոշող բառեր եւ տարբերակող նշանակության զոնե մեկ հատուկ (անձնանուն, տեղանքի կամ խորհրդանշական անվանում) կամ հասարակ անուն:

Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպության ֆիրմային անվանումը կարող է բովանդակել նաեւ նրա գործունեությունը բնորոշող բառեր, նրա գտնվելու վայրի անվանումը, ինչպես նաեւ այլ տվյալներ, որոնք նրա սեփականատերը (հիմնադիրը) համարում է անհրաժեշտ:

Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպության ֆիրմային անվանման գրանցումը եւ իրավական պաշտպանությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով»:

4. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5 հոդվածի 1-ին կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«1. Բաժնետիրական ընկերության ֆիրմային անվանումն այն անվանումն է, որի ներքո վերջինս իրականացնում է իր գործունեությունը, եւ որը թույլ է տալիս նրան զանազանվել այլ իրավաբանական անձանցից կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններից:

Բաժնետիրական ընկերության ֆիրմային անվանումը պետք է բովանդակի «բաժնետիրական ընկերություն» բառերը եւ դրա ձեւը բնորոշող «փակ» կամ «բաց» բառը, ինչպես նաեւ տարբերակող նշանակության զոնե մեկ հատուկ կամ հասարակ անուն:

Բաժնետիրական ընկերության ֆիրմային անվանումը կարող է բովանդակել նաեւ ընկերության գործունեությունը բնորոշող բառեր, նրա գտնվելու վայրի անվանումը, ինչպես նաեւ այլ տվյալներ, որոնք ընկերության հիմնադիրները համարում են անհրաժեշտ:

Բաժնետիրական ընկերության ֆիրմային անվանման գրանցումը եւ իրավական պաշտպա-

նությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով»:

5. «Երաշխավորությամբ գործող ձեռնարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10 հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ`

«Հոդված 10. Երաշխավորությամբ գործող ձեռնարկության ֆիրմային անվանումը

Երաշխավորությամբ գործող ձեռնարկության ֆիրմային անվանումն այն անվանումն է, որի ներքո վերջինս իրականացնում է իր գործունեությունը, եւ որը թույլ է տալիս նրան զանազանվել այլ իրավաբանական անձանցից կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկություններից:

Երաշխավորությամբ գործող ձեռնարկության ֆիրմային անվանումը կողմերի ցանկությամբ կարող է ներառել երաշխավորողի անվանումը միայն անժամկետ, ինչպես նաեւ լիակատար պատասխանատվությամբ երաշխավորության դեպքերում:

Երաշխավորությամբ գործող ձեռնարկության ֆիրմային անվանման գրանցումը եւ իրավա-

կան պաշտպանությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով»:

Հոդված 18. Անցումային դրույթներ

Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը պետական ռեզիստրում գրանցված իրավաբանական անձանց կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունների ֆիրմային անվանումների գրանցումը սույն օրենքով սահմանված կարգով պարտադիր չէ:

«Պետական ձեռնարկությունների եւ անավարտ շինարարության օբյեկտների սեփականաշնորհման եւ ապապետականացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սեփականաշնորհվող ձեռնարկությունների եւ անավարտ շինարարության օբյեկտների համար ֆիրմային անվանման հայտերը քննարկվում են հնգօրյա ժամկետում:

Հոդված 19. Օրենքի ուժի մեջ մտնելը

Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 1997թվականի սեպտեմբերի 1-ից:

Հայաստանի Հանրապետության նախագահ
 Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

Երեւան
 9 հունիսի 1997 թ.

Գրանցված է
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
№ 36970030, 19.06.1997թ.

ԿԱՐԳ

արտոնագրերի զիջման մասին պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման

1. Սույն կարգը սահմանված է «Արտոնագրերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 5-րդ մասի, 15 հոդվածի 5-րդ մասի, ինչպես նաեւ ՀՀ վարչապետի 1995թ. դեկտեմբերի 18-ի դ350 որոշմամբ հաստատված ՀՀ արտոնագրային վարչության կանոնադրության 2-րդ կետի համաձայն գյուտի, օգտակար սարքի, արդյունաբերական նմուշի արտոնագրերի զիջման կամ այլ անձանց դրանց օգտագործման իրավունքի ընձեռման մասին լիցենզային պայմանագրերի (այսուհետեւ նաեւ՝ պայմանագիր) քննարկումն ու գրանցումն իրականացնելու համար:

2. Հայաստանի Հանրապետության արտոնագրային վարչությունում (Հայարտոնագիր) գրանցման ենթակա են այն պայմանագրերը, որոնք վերաբերում են համապատասխան պետական գրանցամատյանում գրանցված գյուտերին, օգտակար սարքերին, արդյունաբերական նմուշներին (այսուհետեւ նաեւ՝ օբյեկտներ):

Չգրանցված պայմանագրերը իրավաբանական ուժ չունեն:

3. Լիցենզային կամ զիջման մասին պայմանագրի գրանցումը կատարվում է պատշաճ ձեւով լրացված դիմումի հիման վրա (ձեւերը կցվում են), որը ներկայացվում է Հայարտոնագիր:

Դիմումը պետք է վերաբերի մեկ պայմանագրի եւ ստորագրվի արտոնագրատիրոջ կողմից: Չեռնարկության (կազմակերպության) անունից ներկայացվող դիմումը ստորագրում է ձեռնարկության (կազմակերպության) ղեկավարը, որի ստորագրությունը վավերացվում է կնիքով:

Հայաստանի Հանրապետությունից դուրս ապրող ֆիզիկական անձինք եւ արտասահմանյան իրավաբանական անձինք լիցենզային կամ զիջման մասին պայմանագրի գրանցման հետ կապված գործերը վարում են Հայաստանի Հանրապետությունում հիմնական բնակության կամ գտնվելու վայր ունեցող իրենց ներկայացուցչի կամ Հայարտոնագրում գրանցված արտոնագրային հավատարմատարի միջոցով:

Դիմումին կից ներկայացվում են՝

ա) լիցենզային կամ զիջման մասին պայմանագիրը (2 օրինակ):

բ) արտոնագիրը (երը):

գ) պայմանագրի գրանցման համար սահմանված տուրքի վճարման անդորրագիրը:

դ) լիազորագիրը, եթե դիմումը ներկայացված է Հայարտոնագրում գրանցված հավատարմատարի միջոցով:

Փաստաթղթերը ներկայացվում են հայերեն: Փաստաթղթերն այլ լեզվով ներկայացնելու դեպքում կցվում է սահմանված կարգով վավերացված դրանց հայերեն թարգմանությունը:

4. Դիմումն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում Հայարտոնագիրը ստուգում է դրա համապատասխանությունը սույն կարգի 3-րդ կետի պահանջներին եւ անհամապատասխանության դեպքում ծանուցագիր է ուղարկում արտոնագրատիրոջը՝ բացակայող կամ ճշգրտված նյութերը երկամսյա ժամկետում ներկայացնելու առաջարկությամբ:

Նշված ժամկետում պահանջված նյութերը չներկայացնելու դեպքում դիմումը մերժվում է:

5. Սույն կարգի 3-րդ կետի պայմաններին բավարարելու դեպքում դիմումը Հայարտոնագրի կողմից ընդունվում է քննարկման, եւ մեկամսյա ժամկետում որոշում է կայացվում պայմանագրի գրանցման վերաբերյալ:

6. Դիմումի քննարկման ընթացքում ստուգվում է՝

ա) լիցենզի կամ զիջման օբյեկտի իրական կարգավիճակը:

բ) պայմանագրի կնքման օրինականությունը, այդ թվում՝ այլ անձանց իրավունքների խախտման բացակայությունը:

Լիցենզային պայմանագրի գրանցման մասին դիմումի քննարկման դեպքում ստուգվում է նաեւ դրա մեջ անհիմն սահմանափակումների առկայությունը, որոնք կարող են վնաս հասցնել ՀՀ տնտեսական շահերին:

7. Ներկայացված նյութերը սույն կարգի 3-րդ եւ 6-րդ կետերով սահմանված պահանջներին բավարարելու դեպքում Հայարտոնագիրը՝

ա) որոշում է կայացնում պայմանագիրը գրանցելու մասին:

բ) պայմանագիրը գրանցում է համապատասխան գրանցամատյանում:

գ) համապատասխան գրառում է կատարում յուրաքանչյուր արտոնագրի մեջ:

դ) վերադարձնում է գրանցված պայմանագրի 1 օրինակը եւ արտոնագիրը (երը):

ե) անհրաժեշտ նշումներ է կատարում հա-

մնապատասխան պետական գրանցամատյանում (գյուտի, օգտակար սարքի կամ արդյունաբերական նմուշի)։

գ) տեղեկություններ է հրապարակում զիջման կամ լիցենզային պայմանագրի գրանցման մասին։

8. Եթե լիցենզի կամ զիջման օբյեկտը իրավաբանական ուժ չունի (արտոնագիրը չի գործում), կամ խախտվել են այլ անձանց իրավունքները, կամ առկա են անհիմն սահմանափակումներ, ապա որոշում է կայացվում պայմանագիրը չգրանցելու մասին։

9. Հայարտոնագրում գրանցման ենթակա են նաև լիցենզային պայմանագրերի մեջ կատարված փոփոխությունները, որոնք վերաբերում են կողմերի, պայմանագրի գործողության ժամկետի, տարածքի, փոխանցվող իրավունքների շրջանակների փոփոխությանը։

10. Լիցենզային պայմանագրերի մեջ կատարված փոփոխությունների գրանցումը կատարվում է Հայարտոնագիր ներկայացված դիմումի հիման վրա (ծեւը կցվում է), որին պետք է կցվի՝

ա) լիցենզային պայմանագրի մեջ փոփոխություններ կատարելու մասին պայմանագիրը (համաձայնագիրը) կամ համապատասխան այլ փաստաթուղթ (2 օրինակ)։

բ) համապատասխան տուրքի վճարման անդորրագիրը։

գ) լիազորագիրը, եթե դիմումը ներկայացվում է Հայարտոնագրում գրանցված հավատարմատարի միջոցով։

Դիմումը քննարկվում է սույն կարգի 3-րդ եւ 6-րդ կետերին համապատասխան։

11. Լիցենզային պայմանագրի վաղաժամկետ դադարեցման կամ դրա գործողության երկարածան մասին դատարանի կողմից կամ լիցենզատուի եւ լիցենզառուի փոխհամաձայնությամբ կայացված որոշման մասին կողմերը մեկամսյա ժամկետում պետք է հայտնեն Հայարտոնագիր, որը համապատասխան գրառում է կատարում լիցենզային պայմանագրերի գրանցամատյանում եւ այդ մասին տեղեկատվություն է հրապարակում իր պաշտոնական տեղեկագրում։

12. Լիցենզային կամ զիջման մասին պայմանագրերը եւ դրանց մեջ կատարված փոփոխությունները ուժի մեջ են մտնում Հայարտոնագրի կողմից դրանց գրանցման օրվանից։

Լիցենզային կամ զիջման մասին պայմանագրի գրանցման վերաբերյալ Հայարտոնագրի որոշումները կարող են զանգատարկվել դատական կարգով։

13. Գրանցված լիցենզային պայմանագրի գործին կարելի է ծանոթանալ եւ դրանից քաղվածքներ ստանալ միայն լիցենզատուի եւ լիցենզառուի համատեղ գրավոր թույլտվությամբ։

Հաստատված է
Հայարտոնագրի
1997թ. ապրիլի 25-ի
№ 13 հրամանով

Ձեւ ԱԼ 1

Հայաստանի Հանրապետության
արտոնագրային վարչություն

Դիմում

լիցենզային պայմանագրի գրանցման մասին

Խնդրում եմ գրանցել № _____ արտոնագրով (երով) պաշտպանված գյուտի (երի) (օգտակար սարքի (երի), արդյունաբերական նմուշի (ների) օգտագործման իրավունքի ընձեռնման մասին կից ներկայացվող պայմանագիրը:

Արտոնագրատեր (լիցենզատու) _____
անունը, ազգանունը կամ լրիվ անվանումը, հասցեն, երկրի կոդը

Լիցենզառու _____
անունը, ազգանունը կամ լրիվ անվանումը, հասցեն, երկրի կոդը

Կ. Տ. _____
ստորագրություն, քվական արտոնագրատիրոջը ներկայացնող անձի անունը, ազգանունը եւ պաշտոնը

Նամակագրության հասցեն _____
փոստային հասցեն, հեռախոսը, ֆաքսը

Կից ներկայացվող փաստաթղթեր

1. Լիցենզային պայմանագիրը _____ թերթից, 2 օրինակ
2. Արտոնագիրը (երը) _____ թերթից, _____ հատ
3. Լիազորագիրը 1 թերթից, 1 օրինակ
4. Սահմանված տուրքի վճարման անդորրագիրը 1 թերթից, 1 օրինակ

Ձեւ ԱԼ 2

Հայաստանի Հանրապետության
արտոնագրային վարչություն

Դիմում

լիցենզային պայմանագրում կատարված
փոփոխությունների գրանցման մասին

Խնդրում եմ գրանցել № _____ արտոնագրով (երով) պաշտպանված գյուտի (երի)
(օգտակար սարքի (երի), արդյունաբերական նմուշի (ների) օգտագործման իրավունքի
ընձեռնման մասին պայմանագրում (գրանցված է «___» _____ 199 թ. № _____)
կատարված կից ներկայացվող փոփոխությունները:

Արտոնագրատեր (լիցենզատու) _____
անունը, ազգանունը կամ լրիվ անվանումը, հասցեն, երկրի կոդը

Լիցենզառու _____
անունը, ազգանունը կամ լրիվ անվանումը, հասցեն, երկրի կոդը

Կ. Տ. _____
ստորագրություն, թվական արտոնագրատիրոջը ներկայացնող անձի անունը, ազգանունը եւ պաշտոնը

Նամակագրության հասցեն _____
փոստային հասցեն, հեռախոսը, ֆաքսը

Կից ներկայացվող փաստաթղթեր

1. Լիցենզային պայմանագրում կատարված փոփոխությունները
(պայմանագիրը, համաձայնագիրը եւ այլն) _____ թերթից, 2 օրինակ
2. Լիազորագիրը 1 թերթից, 1 օրինակ
3. Սահմանված տուրքի վճարման անդորրագիրը 1 թերթից, 1 օրինակ

Ձեւ Ա Ձ 1

Հայաստանի Հանրապետության
արտոնագրային վարչություն**Դիմում**

արտոնագրի զիջման պայմանագրի գրանցման մասին

Խնդրում եմ գրանցել գյուտի (երի) (օգտակար սարքի (երի), արդյունաբերական
 նմուշի (ների) № _____ արտոնագրի (երի) զիջման մասին կից ներկայացվող
 պայմանագիրը:

Արտոնագրատեր (զիջող) _____

անունը, ազգանունը կամ լրիվ անվանումը, հասցեն, երկրի կոդը

Ստացող _____

անունը, ազգանունը կամ լրիվ անվանումը, հասցեն, երկրի կոդը

Կ. Տ. _____

ստորագրություն, թվական

արտոնագրատիրոջը ներկայացնող անձի անունը, ազգանունը եւ պաշտոնը

Նամակագրության հասցեն _____

փոստային հասցեն, հեռախոսը, ֆաքսը

Կից ներկայացվող փաստաթղթեր

1. Ձիջման մասին պայմանագիրը _____ թերթից, 2 օրինակ
 2. Արտոնագիրը (երը) _____ թերթից, _____ հատ
 3. Լիազորագիրը 1 թերթից, 1 օրինակ
- Սահմանված տուրքի վճարման անդորրագիրը 1 թերթից, 1 օրինակ

Գրանցված է
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
№ 36970031, 26.06.1997թ.

ԿԱՐԳ

ապրանքային նշանների զիջման մասին պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման

1. Սույն կարգը սահմանված է 1997թ. մայիսի 12-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27 հոդվածի համաձայն գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանի (այսուհետեւ՝ ապրանքային նշան) զիջման կամ այլ անձանց դրա օգտագործման իրավունքի ընձեռման մասին լիցենզային պայմանագրերի (այսուհետեւ նաեւ՝ պայմանագիր) քննարկումն ու գրանցումն իրականացնելու համար:

2. Հայաստանի Հանրապետության արտոնագրային վարչությունում (Հայարտոնագիր) գրանցման ենթակա են այն պայմանագրերը, որոնք վերաբերում են ապրանքային նշանի Հայաստանի Հանրապետության պետական մատչանում (այսուհետեւ՝ գրանցամատչան) գրանցված ապրանքային նշաններին:

Զգրանցված պայմանագրերը համարվում են անվավեր:

3. Լիցենզային կամ զիջման մասին պայմանագրերի գրանցումը կատարվում է պատշաճ ձևով լրացված դիմումի հիման վրա (ձեւերը կցվում են), որը ներկայացվում է Հայարտոնագրի:

Դիմումը պետք է վերաբերի մեկ պայմանագրի եւ ստորագրվի նշանի սեփականատիրոջ կողմից: Զեռնարկության (կազմակերպության) անունից ներկայացվող դիմումը ստորագրում է ձեռնարկության (կազմակերպության) ղեկավարը, որի ստորագրությունը վավերացվում է կնիքով:

Օտարերկրյա իրավաբանական անձինք եւ անհատ ձեռներեցները ապրանքային նշանի զիջման մասին կամ լիցենզային պայմանագրի գրանցման հետ կապված գործերը վարում են Հայաստանի Հանրապետությունում հիմնական բնակության կամ գտնվելու վայր ունեցող իրենց ներկայացուցչի կամ Հայարտոնագրում գրանցված արտոնագրային հավատարմատարի միջոցով:

Դիմումին կից ներկայացվում են՝

ա) լիցենզային կամ զիջման մասին պայմանագիրը (2 օրինակ):

բ) նշանի գրանցման վկայականը (ներք):

գ) պայմանագրի գրանցման համար սահմանված տուրքի վճարման անդորրագիրը:

դ) լիազորագիրը, եթե դիմումը ներկայացված է Հայարտոնագրում գրանցված հավատարմատարի միջոցով:

Դիմումը եւ դրան կից նյութերը ներկայացվում են հայերեն: Փաստաթղթերն այլ լեզվով ներկայացնելու դեպքում կցվում է սահմանված կարգով վավերացված դրանց հայերեն թարգմանությունը:

4. Դիմումն ստանալու օրվանից եռօրյա ժամկետում Հայարտոնագիրն ստուգում է դրա համապատասխանությունը սույն կարգի 3-րդ կետի պահանջներին եւ անհամապատասխանության դեպքում ծանուցագիր է ուղարկում նշանի սեփականատիրոջը՝ բացակայող կամ ճշգրտված նյութերը երկամսյա ժամկետում ներկայացնելու առաջարկությամբ:

Նշված ժամկետում պահանջված նյութերը չներկայացնելու դեպքում դիմումը ներժվում է:

5. Սույն կարգի 3-րդ կետի պայմաններին բավարարելու դեպքում դիմումը Հայարտոնագրի կողմից ընդունվում է քննարկման, եւ մեկամսյա ժամկետում որոշում է կայացվում պայմանագրի գրանցման վերաբերյալ:

6. Դիմումի քննարկման ընթացքում ստուգվում է՝

ա) հանդիսանու՞մ է արդյոք ապրանքային նշանը (նշանները) զիջող անձը կամ դրա (դրանց) օգտագործման իրավունքն ընձեռող անձը (լիցենզատու) ապրանքային նշանի (նշանների) սեփականատերը:

բ) որոշվա՞ծ է արդյոք ապրանքային նշանի (նշանների) նկատմամբ իրավունքների փոխանցման տեսակը (զիջում կամ լիցենզ):

գ) որոշվա՞ծ է արդյոք փոխանցվող իրավունքների ծավալը (լիցենզի տեսակը, գործողության ժամկետն ու տարածքը, այն ապրանքների ցանկը, որոնց նկատմամբ զիջվում է ապրանքային նշանը (նշանները) կամ ընձեռվում է լիցենզ):

դ) այն պարտադիր պայմանը, որ լիցենզառուի ապրանքը որակապես չպետք է զիջի լիցենզատուի ապրանքին եւ վերջինս հսկողություն պետք է իրականացնի այդ պայմանի կատարման նկատմամբ:

7. Սույն կարգի 3-րդ եւ 6-րդ կետերի պայմաններին բավարարելու դեպքում Հայարտոնագիրը՝

ա) որոշում է կայացնում պայմանագիրը գրանցելու մասին.

բ) պայմանագիրը գրանցում է համապատասխան գրանցամատյանում.

գ) համապատասխան գրառում է կատարում (յուրաքանչյուր) նշանի վկայականի մեջ.

դ) նոր վկայական է ձեւակերպում այն անձի անունով, ում զիջվել է նշանը, նշելով այն ապրանքները, որոնց նկատմամբ գրանցվել է զիջման պայմանագիրը (եթե զիջումը կատարվել է ապրանքների մի մասի համար).

ե) վերադարձնում է գրանցված պայմանագրի մեկ օրինակը եւ նշանի վկայականը (ները).

զ) տեղեկություններ է հրապարակում զիջման կամ լիցենզային պայմանագրի գրանցման մասին:

8. Եթե ապրանքային նշանը զիջող անձը դրա սեփականատերը չէ, կամ լիցենզատուն իրավասու չէ փոխանցել ապրանքային նշանի օգտագործման իրավունքը, ապա որոշում է կայացվում պայմանագիրը չգրանցելու մասին:

Ապրանքային նշանի զիջման մասին պայմանագիրը չի գրանցվում նաեւ այն դեպքում, եթե այն կարող է սպառողին մոլորության մեջ զգել ապրանքի կամ արտադրողի հետ կապված հարցերում:

9. Հայարտոնագրում գրանցման ենթակա են նաեւ լիցենզային պայմանագրերի մեջ կատարված փոփոխությունները, որոնք վերաբերում են կողմերի, պայմանագրի գործողության ժամկետի, տարածքի, փոխանցվող իրավունքների ծավալի փոփոխությանը:

Սույն կարգին համապատասխան չգրանցված փոփոխությունները համարվում են անվավեր:

10. Լիցենզային պայմանագրերի մեջ կատարված փոփոխությունների գրանցումը կատարվում է Հայարտոնագիր ներկայացված դիմումի հիման վրա (ձեւը կցվում է), որին պետք է կցվի՝
ա) լիցենզային պայմանագրի մեջ փոփոխություններ կատարելու մասին պայմանագիրը (համաձայնագիրը) կամ համապատասխան այլ փաստաթուղթ (2 օրինակ).

բ) համապատասխան տուրքի վճարման անդորրագիրը.

գ) լիազորագիրը, եթե դիմումը ներկայացված է Հայարտոնագրում գրանցված հավատարմատարի միջոցով:

Դիմումը քննարկվում է սույն կարգի 3-րդ եւ 6-րդ կետերին համապատասխան:

11. Լիցենզային պայմանագրի վաղաժամկետ դադարեցման կամ դրա գործողության երկարաձգման մասին դատարանի կողմից կամ լիցենզատուի եւ լիցենզատուի փոխհամաձայնությամբ կայացված որոշման մասին մեկամսյա ժամկետում կողմերը պետք է հայտնեն Հայարտոնագիր, որը համապատասխան գրառում է կատարում լիցենզային պայմանագրերի գրանցամատյանում եւ այդ մասին տեղեկատվություն է հրապարակում իր պաշտոնական տեղեկագրում:

12. Սույն կարգին համապատասխան գրանցված պայմանագրերը եւ դրանց մեջ կատարված փոփոխությունները ուժի մեջ են մտնում դրանց գրանցման օրվանից:

Լիցենզային կամ զիջման մասին պայմանագրի գրանցման վերաբերյալ Հայարտոնագրի որոշումները կարող են գանգատարկվել դատական կարգով:

Հաստատված է
Հայարտոնագրի
1997թ. ապրիլի 25-ի
№ 13 հրամանով

Ձեւ Ե Լ 1

Հայաստանի Հանրապետության
արտոնագրային վարչություն

Դիմում

լիցենզային պայմանագրի գրանցման մասին

Խնդրում եմ գրանցել ապրանքային նշանի (ների) օգտագործման իրավունքի
ընձեռնման մասին կից ներկայացվող պայմանագիրը:

Ապրանքային նշանի գրանցման վկայական (ներ) № _____

Նշանի սեփականատեր (լիցենզատու) _____
անունը, ազգանունը կամ լրիվ անվանումը, հասցեն, երկրի կոդը

Լիցենզառու _____
անունը, ազգանունը կամ լրիվ անվանումը, հասցեն, երկրի կոդը

Կ. Տ. _____
ստորագրություն, քվական սեփականատիրոջը ներկայացնող անձի անունը, ազգանունը եւ պաշտոնը

Նամակագրության հասցեն _____
փոստային հասցեն, հեռախոսը, ֆաքսը

Կից ներկայացվող փաստաթղթեր

1. Լիցենզային պայմանագիրը _____ թերթից, 2 օրինակ
2. Նշանի գրանցման վկայականը (ները) _____ թերթից, _____ հատ
3. Սահմանված տուրքի վճարման անդորրագիրը 1 թերթից, 1 օրինակ
4. Լիազորագիրը 1 թերթից, 1 օրինակ

Ձեւ Ե Լ 2

Հայաստանի Հանրապետության
արտոնագրային վարչություն

Դիմում

Լիցենզային պայմանագրում կատարված
փոփոխությունների գրանցման մասին

Խնդրում եմ գրանցել ապրանքային նշանի (ների) օգտագործման իրավունքի
ընձեռման մասին պայմանագրում (գրանցված է «___» _____ 199 թ. №___)
կատարված կից ներկայացվող փոփոխությունները:
Ապրանքային նշանի գրանցման վկայական (ներ) №_____

Նշանի սեփականատեր (լիցենզատու) _____
անունը, ազգանունը կամ լրիվ անվանումը, հասցեն, երկրի կոդը

Լիցենզառու _____
անունը, ազգանունը կամ լրիվ անվանումը, հասցեն, երկրի կոդը

Կ. Տ. _____
ստորագրություն, թվական սեփականատիրոջը ներկայացնող անձի անունը, ազգանունը եւ պաշտոնը

Նամակագրության հասցեն _____
փոստային հասցեն, հեռախոսը, ֆաքսը

Կից ներկայացվող փաստաթղթեր

1. Լիցենզային պայմանագրում կատարված փոփոխությունները
(պայմանագիրը, համաձայնագիրը եւ այլն) _____ թերթից, 2 օրինակ
2. Լիազորագիրը 1 թերթից, 1 օրինակ
3. Սահմանված տուրքի վճարման անդորրագիրը 1 թերթից, 1 օրինակ

Ձեռն Ե Զ 1

Հայաստանի Հանրապետության
արտոնագրային վարչություն

Դիմում

ապրանքային նշանի զիջման
պայմանագրի գրանցման մասին

Խնդրում եմ գրանցել ապրանքային նշանի (ների) զիջման մասին կից ներկայացվող
պայմանագիրը:

Ապրանքային նշանի գրանցման վկայական (ներ) № _____

Նշանի սեփականատեր (զիջող) _____
անունը, ազգանունը կամ լրիվ անվանումը, հասցեն, երկրի կոդը

Ստացող _____
անունը, ազգանունը կամ լրիվ անվանումը, հասցեն, երկրի կոդը

Կ. Տ. _____
ստորագրություն, թվական նշանի սեփականատիրոջը ներկայացնող անձի անունը, ազգանունը եւ պաշտոնը

Նամակագրության հասցեն _____
փոստային հասցեն, հեռախոսը, ֆաքսը

Կից ներկայացվող փաստաթղթեր

1. Ջիջման մասին պայմանագիրը _____ թերթից, 2 օրինակ
2. Նշանի գրանցման վկայականը (ները) _____ թերթից, _____ հատ
3. Սահմանված տուրքի վճարման անդորրագիրը 1 թերթից, 1 օրինակ

ԳՅՈՒՏԵՐ

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՄՅ ST.9 ստանդարտի**

- 11 արտոնագրի համարը
- 21 հայտի համարը
- 22 հայտի ստացման թվականը
- 23 լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն
- 24 թվականը, որից սկսվում է ԳԳ արտոնագրով վերապահված իրավունքների գործողությունը
- 31 առաջնային հայտի համարը
- 32 առաջնային հայտի ներկայացման թվականը
- 33 երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
- 46 հավակնության սահմանման հրապարակման թվականը
- 51 միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
- 54 գյուտի անվանումը
- 57 գյուտի հավակնության սահմանումը
- 62 ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
- 71 հայտատուն(ները), երկրի կոդը
- 72 գյուտի հեղինակը(ները), երկրի կոդը
- 73 արտոնագրատերը, հասցեն**, երկրի կոդը
- 74 արտոնագրային հավատարմատար
- 76 հեղինակը, որը նաեւ հայտատու եւ արտոնագրատեր է, հասցեն**, երկրի կոդը
- 86 միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
- (*) տվյալներ նախկին պաշտպանական այն փաստաթղթի մասին, որի հիման վրա տրվել է ԳԳ արտոնագիրը

Փաստաթղթի տեսակի կոդը

- A1 գյուտի արտոնագիր
- A2 գյուտի ժամանակավոր արտոնագիր
- B1 ԽՍՀՄ կամ ԽՍՀՄ նախկին սուբյեկտ հանդիսացող պետության պաշտպանական փաստաթղթի հիման վրա տրված արտոնագիր
- B2 նախապես ԳԳ ժամանակավոր արտոնագրով պաշտպանված գյուտի արտոնագիր

** ազգային արտոնագրատերերի դեպքում

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51)⁵ **A01F 25/00** (11) **378 A2**
 (21) 96067 (22) 16.05.96
 (72) Ժ. Գ. Աղաջանյան, Գ. Գ. Սնապյան, Ռ. Ա. Բեգլարյան, Ա. Ս. Աբրահամյան, AM
 (71) (73) Ժիրայր Գուրգենի Աղաջանյան, Երեւան, Գյուլբենկյան 46, բն. 42, AM
 (54) (57)

Պտուղների պահպանման եղանակ, ըստ որի պտուղները մշակում են ախտահանիչ նյութով. *դարբերվում է* նրանով, որ որպես ախտահանիչ նյութ օգտագործում են 20-30% բիշոֆիտի ջրային լուծույթ եւ մշակումը կատարում սենյակային ջերմաստիճանում, 5 վայրկյան այդ լուծույթում ընկղմելու միջոցով:

(51)⁵ **A01F 25/00** (11) **379 A2**
 (21) 96121 (22) 21.06.96
 (72) Ա. Ս. Աբրահամյան, Ժ. Գ. Աղաջանյան, Ռ. Ա. Բեգլարյան, AM
 (71) (73) Արմինե Սիրականի Աբրահամյան, Երեւան, Մոսկովյան 28, բն. 16, AM
 (54) (57)

Պտուղ-բանջարեղենի տեղափոխման կամ պահպանման փայտյա արկղերի մշակման եղանակ, ըստ որի արկղերը մշակում են ախտահանիչ նյութով. *դարբերվում է* նրանով, որ որպես ախտահանիչ նյութ օգտագործում են 23-27% բիշոֆիտի լուծույթ եւ մշակումը կատարում սենյակային ջերմաստիճանում, 5-10 վայրկյան այդ լուծույթում ընկղմելու միջոցով:

(51)⁵ **A01G 9/14** (11) **380 A2**
 (21) 97039 (22) 20.05.97
 (76) Գրիգոր Երեմի Ավագյան, Երեւան, Պուշկինի 40, բն. 14, AM
 (54) (57)

Ջերմոց, որը դարավանդված լանջի վրա տեղակայված միաթեք տանիքաձաձկով կառույց է. *դարբերվում է* նրանով, որ տանիքաձաձկի թեքությունը կազմում է հորիզոնի նկատմամբ 40°, իսկ հյուսիսահայաց պատը իրականացված է ջերմակլանիչ նյութից, օրինակ՝ սեւ տուֆից:

(51)⁵ **A01N 37/12** (11) **381 A2**
C08F 20/02
 (21) 000312 (22) 19.07.94
 (72) Է. Ս. Հարությունյան, Ն. Բ. Թավաքալյան, Գ. Ե. Մարկոսյան, AM
 (71) (73) Երեւանի «Պլաստպոլիմեր» ինստիտուտ, Երեւան, Արշակունյաց 127, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության ինստիտուտ, Երեւան, Պ. Սեւակի 7, AM
 (54) (57)

Քուսակեր տղերի ձմեռող ձվերի ոչնչացման միջոց, որն իրենից ներկայացնում է վինիլացետատի եւ կրոտոնաթթվի համապոլիմերի ջրային լուծույթ. *դարբերվում է* նրանով, որ կրոտոնաթթվի շղթաները համապոլիմերում կազմում են 5-8 զանգվ. %, իսկ համապոլիմերը լուծույթում՝ 4-25 զանգվ. %:

(51)⁵ **A01N 57/20** (11) **382 A1**
 (21) 000551 (22) 12.09.91
 (24) 29.06.94 (32) 13.09.90 (33) JP
 (31) 2-243252
 (72) Նոբույուկի Մակասիտա, Հիրոսի Յոսիի, Ցսունեգո Յոշիդա, Սուիցի Հոպպալա, Հիրոսի Կիկուգավա, JP
 (71) (73) Իշահարա Մանգյո Կաիշա ԼԹԳ, JP
 (74) Հ. Դավթյան
 (54) (57)

Հերբիցիդային սիներգային բաղադրանյութ, որը ներառում է N-ֆոսֆոնամեթիլզվիցիմի աղ եւ երկրորդ ակտիվ բաղադրամաս. *դարբերվում է* նրանով, որ որպես N-ֆոսֆոնամեթիլզվիցիմի աղ օգտագործում են իզոպրոպիլամինային կամ եռմեթիլսուլֆոնային աղ, իսկ որպես երկրորդ բաղադրամաս՝ 1-(4,6-երկմեթօքսիպիրիմիդին-2-իլ)-3-(3-եռֆտորմեթիլ-2-պիրիդիլսուլֆոնիլ)միզանյութ, բաղադրամասերի (2,5-40)/1 կշռային հարաբերակցությամբ:

(51)⁵ **A23C 19/00** (11) **383 A2**
 (21) 96210 (22) 23.07.96
 (72) Ռ. Ա. Բեգլարյան, Վ. Ա. Թումանյան, Վ. Մ. Հովհաննիսյան, Ս. Շ. Շաքարյան, AM
 (71) (73) Վլադիմիր Սկրոչի Հովհաննիսյան, Երեւան, Աղայան 7, բն. 17, AM

(54) (57)

“Արմեն” աղաջրային պանրի ստացման եղանակ. ըստ որի կատարում են կաթի մակարդում, ստացված մակարդուկի կտրատում, պանրահատիկի դնում, պանրային զանգվածի ձեւավորում, մամլում, աղադրում, հասունացում եւ պահպանում. *փարբերվում է* նրանով, որ պանրային զանգվածի ձեւավորումը եւ մամլումը իրականացնում են երկու ժամվա ընթացքում պողպատյա ծակոտկեն կաղապարներում, գործադրելով պանրային զանգվածի կշռի կրկնակի մեծության ուժ, իսկ հասունացումը՝ 14-15°C ջերմաստիճանում 60 օրվա ընթացքում 18-20% աղաջրում:

(51)⁵ A61B 1/00 (11) 384 A2
(21) 96312 (22) 04.12.96

(72) Հ. Հ. Մոկացյան, Լ. Մ. Աղաջանովա, Լ. Հ. Արգարյան, Է. Մ. Միքայելյան, Մ. Ի. Աղաջանով, AM

(71) (73) Երեւանի Միսիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան, Երեւան, Կորյունի 2, AM

(54) (57)

Օքսիդատիվ սթրեսով հիվանդի արյան մեջ լիպիդների գերօքսիդացման եւ հակաօքսիդանթային համակարգի հաշվեկշռի գործակցի որոշման եղանակ, ըստ որի որոշում են օքսիդատիվ սթրեսի կենսամակնիչների մակարդակը արյան մեջ. *փարբերվում է* նրանով, որ արյան մեջ միաժամանակ որոշում են ազիլպերօքսիդների, դիենային կոնյուգատների, մալոնային դիալդեհիդի, Շիֆի հիմքերի, տոկոֆերոլի, սուպերօքսիդիսմուտազի, գլուտատի-ոնոնեդուկտազի եւ գլյուկոզ-6-ֆոսֆատդեհիդրոգենազի մակարդակները, իսկ հաշվեկշռի գործակցը որոշում հետեւյալ հավասարումից.

$$\frac{UO1 \cdot q41 \cdot URU1 \cdot \bar{C}31}{U7n \cdot q4n \cdot URUn \cdot \bar{C}3n} = K \cdot \frac{S5ayl.1 \cdot S5t.p.1}{S5ayl.n \cdot S5t.p.n} \cdot \frac{UO7n \cdot qn1}{qn \cdot q7q1}$$

որտեղ՝

- UՊ - ազիլպերօքսիդներ
- ԴԿ - դիենային կոնյուգատներ
- ՄՂԱ - մալոնային դիալդեհիդ
- ՇՀ - Շիֆի հիմքեր
- ՏՖ ալ. - տոկոֆերոլի մակարդակը պլազմայում
- ՏՖ է.թ.- տոկոֆերոլի մակարդակը էրիթրոցիտների թաղանթում
- ՍՈԴ - սուպերօքսիդիսմուտազ
- ԳՌ - գլուտատիոնոնեդուկտազ
- ԳԴԳ - գլյուկոզ-6-ֆոսֆատդեհիդրոգենազ
- Կ - հաշվեկշռի գործակցից

1 - հեղափոխող օրինակի ցուցանիշ
n - ցուցանիշի միջին մեծությունը նորմայում:

(51)⁵ A61B 8/00 (11) 385 A2
(21) 96116 (22) 20.06.96

(76) Տիգրան Ռաֆայելի Հարությունյան, Երեւան, Վռամշապուհ արքայի 18ա, բն. 63, AM

(54) (57)

Մարդու պտղի զարգացման ներարգանդային արատների ախտորոշման եղանակ, որը ներառում է պտղի գլխի, գլխուղեղի կամարի, ուղեղիկի, սրտի, որովայնախոռոչի, շարժահենարանային համակարգի եւ ընկերքի ու հարպտոլային հեղուկների գերձայնային հետազոտում եւ նորմալից տարբեր շեղումների բացահայտում. *փարբերվում է* նրանով, որ գլխի ուղեղի բացակայության դեպքում ախտորոշում են անցեֆալիա, անկանոն ուղեղիկի դեպքում՝ միկրոցեֆալիա, մեծ ուղեղիկի դեպքում՝ գլխուղեղի իջվածք, գլխուղեղի կամարի ֆուկտուացիայի առկայության դեպքում՝ ներքին հիդրոցեֆալիա, գլխուղեղի հեղուկային եւ հյուսվածքային կառուցվածքների գերակշռության դեպքում՝ ներքին հիդրոցեֆալիա, ուղեղիկի “բանանաձեւ” տեսքի դեպքում՝ սպինաբիֆիդա, կիսագնդերի ասիմետրիայի եւ ուղեղիկի ու ծոծրակային ոսկրի միջեւ ուղեղի մեծ ցիստեռնի բացակայության դեպքում՝ ողնուղեղի իջվածք, եռախոռոչ սրտի, օվալաձեւ անցքի բացակայության, միջփոքրային միջնապատի արատի, միջնախասարտային միջնապատում լրացուցիչ արատի բացահայտման դեպքում ախտորոշում են սրտի արատներ, որովայնախոռոչի առաջնային պատի արատի, ասցիտի ու հեղուկով լցված ավելորդ խորշերի առկայության, աղիների հանգույցների ու միզապարկի լայնացման դեպքում ախտորոշում են պորտանկ, ողնաշարի արատի ու պարանոցի ողերի շուրջ պորտալարի հանգույցի առկայության եւ պտղի վերջույթների չափսերի 5-8 շաբաթական հղիության ժամկետին անհամապատասխանելու դեպքում ախտորոշում են պորտալարի փաթաթում ու ախոնդրապլազիա, ամբողջությամբ կամ մասնակի ընկերքով արգանդի վզիկի ծածկման, ռետրոընկերքային ու ենթաթաղանթային հեմատոմայի հայտնաբերման եւ հարպտոլային հեղուկի դատարկ «գրպանների» բացակայության ու երկու ուղղահայաց հարթություններում 1 սմ-ից կամ 8 սմ-ից ավելի «գրպանների» առկայության դեպքում ախտորոշում են ընկերքի առաջադրություն:

(51)⁵ A61B 17/04 (11) 386 A2
(21) 96034 (22) 27.03.96

(72) Բ. Ս. Պողոսյան, AM

(71) (73) Մ.Հերացու անվան Երեւանի պետական բժշկական համալսարան, Երեւան, Կորյունի 2, AM

(54) (57)

Աճուկային շրջանի եւ արտաքին սեռական օրգանների բնածին լիմֆանգէկտազիայի բուժման վիրաբուժական եղանակ, որը ներառում է ավշաերակային ուղղակի բերանակցման վերադրում. *փարբերվում է* նրանով, որ երակի առջեւի պատին կատարում են 0.3-0.5մմ երկարությամբ կտրվածք, ապա երակին մոտակա ավշանոթի պատում կատարում 0.1-0.2մմ երկարությամբ կտրվածք, որից հետո ավշանոթի կտրվածքավոր հատվածը ծռում են կտրվածքով դուրս, անցկացնում երակի կտրվածքի բացվածքով եւ կարում ավշանոթի մտնող եւ դուրս եկող հատվածների միջեւ երակի կտրվածքի կենտրոնական մասի պատերը:

(51)⁵ **A61D 1/00** (11) **387 A2**
(21) 000574 (22) 25.07.95

(76) Սերգեյ Գուրգենի Եղոյան, Երեւան, Նորքի 2-րդ զանգված, Մոլղովական 112, բն. 41, AM
(54) (57)

Treponema hyodysenteriae անջատման եւ աճեցման սննդամիջավայր, որի կազմում կա մատրիումի քլորիդ, գլյուկոզ, պեպտոն, սպեկտամ «Վ», ազար, խոյի ֆիբրինագերծված արյուն եւ թորած ջուր. *փարբերվում է* նրանով, որ լրացուցիչ պարունակում է ձկան հիդրոլիզատ եւ վերականգնված գլյուտատինոն, բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ, գ.

<i>նապրիումի քլորիդ</i>	<i>0,4 -0,7</i>
<i>գլյուկոզ</i>	<i>0,2 -0,25</i>
<i>պեպտոն</i>	<i>0,8 -1,20</i>
<i>ազար</i>	<i>1,5 -2,0</i>
<i>խոյի ֆիբրինագերծված արյուն</i>	<i>8,0-10,0</i>
<i>սպեկտամ «Վ»</i>	<i>0,8</i>
<i>ձկան հիդրոլիզատ</i>	
<i>(ամինային ազոտը՝ 130-140մգ)</i>	<i>1,5 -2,0</i>
<i>վերականգնված գլյուտատինոն</i>	<i>0,03-0,05</i>
<i>թորած ջուր</i>	<i>մինչեւ 100</i>

(51)⁵ **A61F 9/00** (11) **388 A2**
(21) 96175,96176 (22) 12.07.96

(72) Ա. Հ. Հովհաննիսյան, AM

(71) (73) Մ.Հերացու անվան Երեւանի պետական բժշկական համալսարան, Երեւան, Կորյունի 2, AM

(54) (57)

Աչքի հատակի անոթային հիվանդությունների եւ գլաուկոմայի բուժման եղանակ, որը ներառում է դեղամիջոցների պարաբուրբար ներարկում. *փարբերվում է* նրանով, որ որպես դեղամիջոց կիրառում են պիրացետամի 4%-ոց ջրային լուծույթը, տարեկան 1-2 անգամ պարբերությամբ, 10 օրվա ընթացքում, 0,4 մլ օրական դեղաչափով:

(51)⁵ **A61K 31/43** (11) **389 A2**
(21) 000607 (22) 18.09.95

(72) Շ. Լ. Մնջոյան, Մ. Գ. Յինկեր, Յ. Ջ. Տեր-Ջաքարյան, Ա. Ռ. Հովակիմյան, Շ. Հ. Օհանյան, Ռ. Վ. Պարոնիկյան, AM

(71) (73) ՀՀ ԳԱԱ Ա. Լ. Մնջոյանի անվան նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտ, Երեւան, Ազատության 26, AM

(54) (57)

1. **Հակաբորբոքային հիվանդությունների բուժման եղանակ**, ըստ որի կիրառում են հակամանրէային պատրաստուկներ. *փարբերվում է* նրանով, որ որպես հակամանրէային պատրաստուկ օգտագործում են 6-(1-ֆենիլցիկլապենտիլ-1-կարբամիդա)-պենիցիլինը, որը հիվանդներին ներարկում են ներերակային, ներմկանային, արտաքին, տեղային կամ per os ձեւով:

